արուեստագէտներ, որոնք կ'ըսէին, թէ Մուսոլինին խելացի մարդ մըն է...

— Ի՞նչ է պրոֆմիութիւնը:

— Միութիւնը աղէկ բան մըն է, կարելի է միւզիկ ընել...

— Անցէ՛ք միւս սենեակը:

Մթնոլորտը քանի գնում լարւում է:

Մարքսիստական դիտութիւնը բթացած արօրի նման սրտերի մէջ վտանգաւոր ակռաներ է բաց անում:

Տիկինը մատերը կոտրտում է: Այս կամ այն պատճառով անբաւական մնացած աշակերտները, իրենց ուղեղի մէջ, մեղադրանքների ծայր են սրում եւ պատրաստւում յարձակողականի:

Թաւ ջութակի ուսուցիչը գլուխը անդադար վեր է բարձրացնում, ասողեր փնտռելու պէս, ու վար անում: Ճանճի նման, վազներեան մի քայլերդ մտել է ուղեղը եւ դուրս չի գալիս: Նկատել է, որ ամէն անգամ, որ այդ մեղեդին գլուխն է մտնում, մի դժբախտութիւն է պատահում: Այսօր էլ եկել է՝ սրիկան՝ ուղեղի մէջ նստել ու քերթում է, քերթում է...

Նախագահի ձայնը քանի գնում խստանում է:

Նա իրեն զգում է զօրեղ:Նա ամբողջ յեղափոխութիւնն է, Խորհրդային ըկժիմը, Լենինը, Հոկտեմբերը, կարմիր Մոսկուան: Ոչընչութիւնե՞ր՝ պատասխանեցէ՛ք:

Մերթ ընդ մերթ, Աթարբէկեանի աչքերը սաւառնում են դահլիճի վրայ, սրտերի մէջ մտնելիս, վարիչին նայում ու յետոյ ըժբախտ Յիսուսի նման, անհետանում:

Վայրկեանները քաշ են տալիս իրենց երկար եւ ծանր շղթաները:

* * *

Իսկ Պետթատրոնում Եաղօն ճառում է Համլէթի դէմ: Դերասանների քաղաքացիական քաջութիւնը կովի աչքի մէջ է թռնում, Բերովբէների վրայ աղբ նետում, ողջ ծիծեռնակի փետուրները մէկ մէկ հանում: Այնքան, որ ինքը սովետարարոյ նախագահը իրեն զգում է անմեղ աղաւնի, եւ նրան շրջապատող օրիորդները մինչեւ իսկ ամօթխածութեան նշաններ են ցոյց տալիս:

Դուրս է գալիս, որ ամէնքն էլ գող են, աւազակ, խաբեբայ, հակայեղափոխական: Մեծ, օդը պատռող ժեսթեր, հաստ շրթունքների ծայրին քմծիծաղ եւ մի քիչ փրփուր, հին դերերից ակռաների տակ մնացած ուռուցիկ բառեր, խաւաքարտէ սուրեր եւ լայն թագաւորական պատմուճանների տակ երերող նիհար բարոյականութիւն:

— Ես մեղադրում եմ (բազուկը ցցուած, մատը վեր) Լէբրտին, որովհետեւ նա միշտ էլ խանդարել է Խորհրդային շինարարութեան սուրբ գործին: (Աչքերը ոլորում է, ձեռքը տանում կուրծքին): Նա պարզապէս խաբեբայ է եւ սրիկայ: Երբ նա Պոլսից եկաւ, յիշում եմ, Նաղարեան փողոցի անկիւնում, ականջիս փըսփըսաց.—

— Ընկերներ, ամէնքը գիտեն, որ Դօն Ժուանը ոսկի ժամացոյց է գողացել...

— Թո՛ղ Շէյլոկը պատասխանի մեղադրանքներիս: Նա չէ՞ր որ, երբ մի օր նստած խմում էինք...

Վարագոյրը բացուել է քսմնելի մի տեսարանի վրայ:

Պարապի մէջ որդեր են սողոսկում: Օձերը վախցած իրենց լեղուները ներս են քաշել, իսկ դէմքերնին չածիլած մարդիկ, աղբի մէջ, ոտարոպիկ կատակերգութիւն են խաղում:

Զտեսնուած բան՝ նախագահը, բարոյականի դասեր է կարդում եւ լուռ նստած չեկիստները զգուանք են զգում:

Պոռում կանչում են: Մեծ վարագոյրի վերայ նկարուած Արարատը եւ շաքարէ գիւղացիները խենթացած փախչում են, անորոշ բոյսերի մէջ քամիներ են բռնկում, ու Արագածը այնքան ճեղքուել է, որ ահա աղիքները դուրս պիտի նետէ:

Թատրոնի վարիչը, ա՞խ, ինչո՞ւ մարդկային յիշատակը այդքան երկար է՝ մատերի ծայրին դուրս է գալիս, հարբած մարդու նման պատերին զարնուելով թափառում ու նորից ներս գալիս: Իրեն հիւանդ է զգում: Մի երկու տարի առաջ գրած հակարոլշեւիկեան յօդուածները աչքերի մէջ սատանայական պար են պարում եւ չունչը կտրում: Ստամոքսը վեր է բարձրանում, սիրտը ճնշում, չնայած, որ երկու օր է գրեթէ ոչինչ չի կրել: Բեմի յետեւ, փոշիների մէջ պառկած բոլոր նիզակները,

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան